

## ՄԵՏԱՔՍ ՄԱՆՈՂԻՆ ԵՐԳԸ

### Մ Ե Ն Ե Ր Գ

Ան կը հիւսէ ապքքշումին թելերը ծիւն  
Ու մատներէն կ'անցնի անվերջ լոյսը լուսնին.  
Ի՞նչ մենաւոր գաղտնիքի մէջ հին թերկրութիւն  
Մենաւոր ի՞նչ ըսպասումի բո՛ց երկնային:

×

Ան կը հիւսէ խօ՛լ շարժումով իր սրտին շուրջ  
Բանտի ըստուեր եւ լրութեան խողը ծաւի  
Եւ ինչ որ կայ իբրեւ ըդանիք, իբրեւ անուրց  
Եւ ինչ որ միշտ հոգիին մէջ կը յայտնըսի,

×

Եւ ինչ որ կայ իբրեւ տրտում ու քաղցրաւէտ,  
Շողը նրագին որ յուշերու է զինջ աղրիւր,  
Լոյսին ծնծղան տերեներու սօսափին հետ,  
Ու խենք հոգին աստեղահեւ շրբները բիւր,

×

Եւ ինչ որ կայ ջուրին, քարին մէջ պահպանակ  
Եւ ինչ որ կայ սրտին աշխարհը բընակող,  
Անոր մրոայլ գաղտնիքին մէջ լուսապարփակ  
Շաւալ կ'առնէ ու կը ժափի խորհրդասխօզ:

×

Տունին խորութիկ մրմունչներէն կ'երքան հեռու  
Անըրջարաղձ թելերը խօ՛լ իր շարժումին  
Ու կը նետնեն կըրակին մէջ արեւներու  
Ամէն ըդանիք, ամէն ծաղիկ, ամէն մարմին:

Ի՞նչ կը հիւսէ - քօ՞ղ որուն տակ պիտի պահուի  
Շով աչքերու գեղեցկութիւնը սիրուխա:

### Խ Մ Բ Ե Ր Գ

Բանտի ըստուեր ու լրութեան խողը ծաւի,  
Պատանի մը ցուրտ իր մահարոյր սրտին

համար:

### Մ Ե Ն Ե Ր Գ

Որովհետեւ ա՛լ չի հնչեր ծառին վըրայ  
Լոյսին ծնծղան

### Խ Մ Բ Ե Ր Գ

Եւ աղրիւրին շունչն է մարած:

### Մ Ե Ն Ե Ր Գ

Որովհետեւ գորշ մոխիրն է ծածկեր հիմա  
Քարը կրակին մատներուն տակը յղկըւած:

### Խ Մ Բ Ե Ր Գ

Քարը հազա՞ր նայուած քներու մութ ադամանդ .  
Հազարարի՛ւր յիշատակի չինջ յարութիւն :

### Մ Ե Ն Ե Ր Գ

Անոր առջեւ գրտայ սիրուեր հայրենաւանդ  
Ու մենաւոր գաղտնիքի մէջ հի՞ն թերկրութիւն:

Անոր առջեւ ինչպէս տրդայ մը ծովափին  
Ուր խեցիներ կը հաւաքէ, սրտի խոցե՛ր,  
Ուր հոգիի ցոլքեր գրտայ, անոնց ոսկին  
Ու խնկաբոյր լոյսը նրագին որ կ'առկայծէր.

Քրտայ հրաշեռվը մանկութեան երազը որք,  
Անոր ճեռքէն աստղերուն սիրուը խըլեցի:  
Շուրջը գարութիր ծաղկեցաւ լուսե՛ղ ու բորձ,  
Ու նոր աստուած մ'իր մատանին տըւաւ ինծի:

Ու սորվեցա՞յ հիւսել ինչ որ բա՛նտ է անհուն:

### Խ Մ Բ Ե Ր Գ

Գուն սորվեցա՞ր բանոր հիւսել քու հոգիիդ,  
Եւ ինչ որ կար իբրեւ կշոռյը եղաւ թրռուն  
Իբրեւ մրմունջ, աղօրքի պէս եղաւ վընիտ.

Դուն սորվեցա՞ր հիւսել պատամեն ու  
խանձարուր:

## Մ Ե Ն Ե Ր Գ

Շղրայեցի՛ տիեզերքին ձեռքը ձեռքիս  
Ու բարձրացայ նրւագի պէս մեհենալուր  
Ու բարձրացա՞ լրութեան պէս հնչող հոգիս:

Հիմա ժարին, հիմա լոյսին եւ մուր ջուրին  
Զիս կը տանի մետախին թելը, կապուցայ  
Մադիկներուն որ աստղերէն առաջ կ'այրին.  
Ո՞վ բացաւ սիրու իմ երազիս իրեւ ընծայ:

Բնակեցա՞յ ես ապարանէի մը գաղտնիքով  
Այս տունին մէջ ուր մանկութիւնը կ'աղօքէ.  
Ո՞վ կը վառէ իրիկուան նրազն իր սեմին բով:

## Խ Մ Բ Ե Ր Գ

Դուն կը վառես ու չես գիտեր որ կը դիտէ  
Դուն հեռուէ՞ն կուզաս, հեռո՞ւ արեներէն.  
Մազերուդ մէջ կ'իյնայ լուսե՞ղ անոնց ոսկին,  
Ալիքի պէս բաւ մրմունչներ ենց կ'օրօրին:

## Մ Ե Ն Ե Ր Գ

Ես կը դառնամ շուրջն երազի մը խօլարեւ.  
Ենչ որ արդէն հիւսեցի մուր ու զեղեցիկ.  
Նոր տեսչանիքով պիտի ժակեմ այսուհետեւ.  
Ան չէ ասուած որ չունի սիրու մը բափանցիկ:

## Խ Մ Բ Ե Ր Գ

Սիրու շուրին, սիրու լոյսին, սիրու ժարին.  
Սիրու որ կայ անլսելի մրմունչին մէջ.  
Սիրու կրակէ աղբիւրներուն որ կը վառին:

## Մ Ե Ն Ե Ր Գ

Ես զըտայ ծիրէ համապարփակ եւ լուսառէ,  
Գրտայ երգին ծայնը սրտին բարխումէն  
Ու լեռներուն ծոցը բացուող գարնանազայր  
Ու եղինիներ որ ծիւնին լացը կը խըմէն  
Ու ծաղիկներ աշեքրու պէս բիւրահազար.  
Եւ անոնցով հիւսեցի բանոր հոգիս  
Եւ անոնցով ես բարձրացայ արշալոյսին.  
Խորունկ երկիրն իր երրաշքին տղան ըրաւ զիս:

## Խ Մ Բ Ե Ր Գ

Բայց դուն որք ես, ո՞վ բանաստեղծ, ու կը մսին  
Ձեռքերը ծոյլ որ աղօքի կ'ըլլան սափոր.  
Ձեռքերը չի՞նչ որ էին յոյս եւ ապաէն.

Ձեռքերը լո՞յս որ միացան մութին երբոր  
Անշատուցա՞ւ սէրը սրտին խորհուրդներէն:

## Մ Ե Ն Ե Ր Գ

Ձեռքերը չինչ որ էին յոյս եւ ապաէն  
Ի՞նչ աստղերու շարութիւնով շղրայուցան  
Եւ ի՞նչ վարդեր անոնց մատները կ'արիւնեն  
Մարմարին մէջ աղբիւրներու բիւրեղանայն:

Ձեռքերը լոյս որ մոխիրի մաքրութիւնով  
Կը սեւենին ըստուերներու լուր պաշտումին,  
Ձեռքերը ծոյլ որ աղօքին սիրու են զինով,  
Ի՞նչպէս յիշել որ հողին սուրբ գաղտնիքն էին:

Անոնք դարձեալ կեանիքին խորհուրդը կը բանան  
Եւ անոնցով երկրին ծոցէն կուզան հունակեր  
Ու կը հնչէ մետաղը չինչ լուսանրման,  
Հանկածուլին երգը պայցող ու մահարեր,

Ու կոհակին ՚ աղկիոնին, ապառաժին  
Անոնք դարձեալ կ'ընեն երդումը սիրաւէտ,  
Ձեռքերը լոյս որ խաւարին մէջ կը շարժին:

## Խ Մ Բ Ե Ր Գ

Արշալոյսի մը հեռաւոր կարօտին հետ,  
Ձեռքերը խունկ որ այրեցան մահատիպար:

## Մ Ե Ն Ե Ր Գ

Բանաստեղծի ձեռքեր էին ցայզահամբոյր,  
Սէրը յղկեց իր մատնին անոնց համար  
Եւ յուզուցան մատները չերմ ու ձիւնառոյր  
Եւ հիւսեցին մատախը նուրը եւ հիւսեցին  
Երազի ֆող եւ հիւսեցին շունչի ամբրու:

## Խ Մ Բ Ե Ր Գ

Եւ հիւսեցին իրենց մատները, հիւսեցին  
Երկրին ամբողջ երակներուն աստեղանու:

## Մ Ե Ն Ե Ր Գ

Եւ հիմա երգը հասուն է աշունօրէն,  
Ճշմարիտ երգն ամառին բորք ոսկիներէն  
Կ'ընդունի հոյզն ու մեղրածոր համը հողին.  
Երգը արիւն, երգը ասուու՞ծ, երգը մարմին,  
Որ կը ծընի ու բընութեան խորհուրդներուն  
Կը փոխանցէ նոր գաղտնիքի մը ցոլքն անհուն:

## Խ Մ Բ Ե Ր Գ

Ի՞նչ մենաւոր ըսպասումի աստուածութիւն:

## Մ Ե Ն Ե Ր Գ

Լուսնին լոյսէն որ նրազներուն համբոյր  
կուսայ

Դեռ կը հիւսեմ ապրշումին քելերը ձիւն .

Տայզը բացեր է լրութեան խօն արծաթեայ :

#### Խ Մ Բ Ե Ր Գ

Ի՞նչ մեսաւոր անցեալի մէջ հի՞ն ցնծութիւն :

#### Մ Ե Ն Ե Ր Գ

Շուրջըս ինծի բանտ է եղեր աշխարհը լուռ

Ու կը հիւսեմ ապրշումին քելերը ձիւն .

Սիրուս բացուե՞ր է ազօքին մեհենալուր ,

Կը բարձրանամ ու մատներուս ա'լ կը հրպին

Աստղի բոցեր ու ջրվէժներ ծիր-կաքինի .

Ա'լ ծանրութիւն չըկայ , հոգին կը զգայ հոգին ,

Եւ երկի'րն է որ երկինքին մէջ կ'արիւնի .

Ես հիւսեցի երզը որ զիս կը միացնէ

Տիեզերքի ուլիենըւագ աղրիւրներուն .

Ու բոնելով նամբաներուն ձեռքը ձիւնէ

Ես կը դառնամ խօ'լ հըրավարս ու մըտորուն :

#### Խ Մ Բ Ե Ր Գ

Լուսեղէն ի՞նչ վերադարձի աստուածութիւն :

#### Մ Ե Ն Ե Ր Գ

Դեռ կը հիւսեմ ամէն սրտի ու նրագի շուրջ

Մեղմիկ ըստուեր ու լրութեան խօղը ծաւի

Եւ ինչ որ կայ իբրեւ ըղձանի , իբրեւ անուրջ

Եւ ինչ որ սոսկ հոգին մէջ կը յայտնիրի .

Կը հիւսեմ խօղը որուն տակ պիտի պահուի

Ծով աշեքերու գեղեցկութիւնը սիրավան :

#### ԹԱԻ ԶԱՅՆ ՄԸ ԽՄԲԵՐԳէՆ

Բանտի ըստուեր եւ լրութեան խօղը ծաւի :

#### Մ Ե Ն Ե Ր Գ

Պատանի մը ցուրտ իմ մահարոյր սրտիս  
համար :

**ԱՐՍէՆ ԵՐԿՈՉ**